Յերկրորդ Փրազը, նախ, պատմականորեն նիշտ չեւ Մենք, բոլչեիներս, մասնակցնենք ամենահական կայության պառլամենտներին, և գործը ցույց եւ տվել, վոր այսպիսի մասնակցությունը հեղափոխական պրոլետարիատի կուռակցության Համար վո՞չ միայն ողբանակար, այլև անհրաժեշտ եր հենց ուստական տաղին բուրժուատական հեղափոխությունից (1905) Հետո՝ յերկրորդ բուրժուատական (II. 1917) և ապա սոցիալիստական (X. 1917) հեղափոխությունը նախապատրաստելու Համար։ Յերկրորդ, այդ Փրազը զարմանալիք անտրամարանական եւ Այն բանից, վոր պառլամենտը հական կայությունության որդան և «կենտրոն» և զառնում (իրականում նա «կենտրոն» յերբեք չի յեղել և չի ել կարող լինել, բայց այս՝ հարեանցիորեն), իսկ բանվորներն իրենց իշխանության դարձիքներն են սաեղջում Խորհուրդների ձևով՝ գրանից բղխում եւ այն, վոր բանվորները պետք եւ նախապատրաստվեն — նախապատրաստվեն իդեալնես, քաղաքականապես, տեխնիկապես — պառլամենտի գեմ Խորհուրդների պայքարին, Խորհուրդների կողմից պառլամենտը ցըելուն։ Բայց սրանից բոլորովին չի բղխում, թե այսպիսի ցըումը զմշվարանում կամ չի դարձանում հական կայության պառլամենտի ներսում խորհրդային ուսողիցիայի ներկայությամբ։ Դենիկինի և Կոլչակի գեմ մեր Հաղթական պայքարի ժամանակ մենք վո՞չ մի անգամ չնկատեցինք, վոր նրանց մոտ խորհրդային, պրոլետարական ուսողիցիան նշանակությունը չունենար մեր Հաղթությունների Համար։ Մենք շատ լավ զիտենք, վոր 1918 թ. հունվարի 5-ի Սահմանադիր ժողովի մեր կողմից ցըումը վո՞չ թե չդժվարացավ, այլ հեշտացավ նրան ուզ, վոր ցըուղ Հական կայության Սահմանադիր ժողովին

ներսում կար ինչպես հետեւզական, բոլչելիյան, նույնակա և
անհետեղական, ձախ-եւ-երական, խորհրդային ոպողիցիա:
թեզիսի հեղինակները միանգամայն խճողվել ու մասացել են
մի ամրող շարք, յեթե վոչ բոլոր, հեղափոխությունների փորձը,
վորը վկրյում և այն մտին, թե ինչպես առանձնապես ոպտակար
և հեղափոխությունների ժամանակ սեակցիոն պարտօնենափ դրսի,
մասայական զործողությունն այս պարլամենտի ներսում յե-
ղած հեղափոխությանը համակրող (իսկ ամելի լույս՝ հեղափո-
խությունն ուղղակի պաշտպանող) ոպողիցիայի հետ միացնելը:
Հոլոնդացիները և «ձախերն» ընդհանրապես այստեղ զատում են
վորովն հեղափոխության դոկտրինյորներ, վորոնք յերբեք խելա-
կան հեղափոխության մեջ մասնակցել չեն կամ եւ հեղափոխու-
թյունների պատմություն մեջ թափանցել չեն և կամ վորոշ ունեկ-
ցին հաստատության սուրյեկտիվ «բացասումը» միամտուրեն ըն-
դունում են վորովն նրա խելական խորտակում մի ամրող շարք
որունկուի զործունների միահամառուս ուժերով: Քաղաքական (և վոչ
միայն քաղաքական) նոր իդեան վարկարեկելու և այն միասնակա-
մաննեմիշ միջոցն այն և, վոր, հանուն զրա պաշտպանության,
այդ արսուրդի հասցիք: Վորովհետեւ ամեն մի հշմարտություն,
յեթե այդ «չափազանց» (ինչպես առում եր Դիցելն-հայրը) զարձ-
նենք, յեթե այդ չափազանցնենք, յեթե այդ արածենք իր խելա-
կան կիրառելիության սահմաններից դուրս, կարելի յե արսուրդի
հասցնել, և այդ նույնիսկ անխուսափելիորեն, մատնանշված պայ-
մաններում, արսուրդ և զառնում: Ճիշտ հենց այսուիսի արջի
ծառայություն են մատուցում հոլանդական և գերմանական ձա-
խերն այն նոր նշմարտությանը, թե Խորհրդային իշխանությունը
գերազանց և բուրժուական-դեռևսկիրատական պարլամենտներից:
Հասկանալի յե, ով սկսեր հին ձեռվ և ընդհանրապես առել, թե
բուրժուական պարլամենտներին մասնակցելուց հրաժարվելը վոչ
մի պայմանով թույլատրելի չե, նա իրավացի չեր լինի: Փորձ անել
այստեղ առլու այն պայմանների մեակերպումը, վորոնցում
բոյկոտն ոպտակար և, չեմ կարող, քանի վոր այս հողմանի խըն-
դիրը շատ ավելի համեստ և՝ հաշվի առնել ուստական վորձն
ինսերնացիոնալ կոմունիտական տակտիկայի միքանի հրատապ
հարցերի կալպակցությամբ: Ռուսական վորձը մեղ տվեց բոլ-
չերիների կողմէից արված բոյկոտի մեկ հաջող և ճիշտ (1905),

Հյուսը՝ սխալ (1906) կիրառում։ Վերլուծելով առաջին դեպքը, մենք տեսնում ենք՝ հաջողվեց քոյլ չտալ, վոր սեակցիոն իշխանությանը ունեակցիոն պառլամենտ զումարի այնպիսի պարագաներում, յերբ բացառիկ արագությամբ տնօւմ եր մասնաների արտապատճենական (մասնավորապես զորնագույշային) հեղափոխական դործողությունը, յերբ պրոլետարիատի և դյուզուցիոնի բյան վո՞չ մի խայլ չեր կարող աջակցել ունեակցիոն իշխանության, յերբ լայն, հետամնաց մասսաների վրա հեղափոխական պրոլետարիատն իր աղջմցությունն աղջանովում եր դորձագույշին պայքարով և աղջարային շարժումով։ Միանվամայն ակներեւ և, վոր յելքուղական մամանակակից պայմաններում այս վործը կիրառելի չե։ Միանվամայն ակներեւ և նաև շելքեռում ըերթած վաստարկումների հիման վրա, —վոր պառլամենտներում մասնակցելուց հրաժարվելու այն, թեկուղ պայմանական, պաշտոնական բյանը, վոր անում են հոլանդացիները և «Ճամփերը», արմառապես սխալ և վնասակար և հեղափոխական պրոլետարիատի դործի համար։ *

Արեմայան Յելքուղայում և Ամերիկայում պառլամենտն առանձնապես ատելի յե դարձել բանվոր զառակարգի առաջավոր հեղափոխականներին։ Դա անվիճելի յե։ Դա միանվամայն հասկանալի յե, վորովհետեւ դժվար և պատկերացնել վորեւ ավելի նողկալի, ստոր, գավաճանական բան, քան սոցիալիստական և սոցիոլ-դեմոկրատական պատզամապորների հոկայական մեծամասնության վարչը պառլամենտում պատերազմի ժամանուկ և դրանից հետո։ Բայց վո՞չ միայն անխելացի, այլ ուղղակի հանցանք կլիներ այս արամագրությանը յենթարկվել այն հարցը լուծելիս, թե ինչպես պիտի կոմիտե հանդանանաւ չարիքի դեմ։ Արեմայան Յելքուղայի շատ յերկիրներում հեղափոխական արամագրությունն այժմ, կարելի յե ասել, «նորույթ», կամ «հաղպատկուս» մի բան և հանդիսանում, վորին չափազանց յերկար, սովորդյուն, անհամբեր սպասում ելին, ու թերեւ դրա համար և, վոր այնքան դյուրությամբ են զիջում արամագրությանը։ Եւարկեն, առանց մասսաների հեղափոխական արամագրության, առանց այսպիսի արամագրության աճմանը նպաստող պայմանների՝ հեղափոխական տակտիկան դործողություն չի դառնա, բայց մենք Ռուսաստանում չափազանց յերկար, ծանր, արյունահեղ

փորձով Համազվել ենց այն ճշմարտությանը, վոր մէնակ Հեղափոխական արտօմագրության վրա Հեղափոխական առկութիս կառուցնել չեն կարելի: Տակաթիկան պետք և կառուցված լինի այլի առողջան (և նրան չըջառաբառող պետությունների, և բայց պետությունների, Համաշխարհային մասշտաբով) պատակարությունների բակա ուժերի խիստ սրբակատօվ Հաշվառման վրա, այլև Հեղափոխական շարժումների փորձի Հաշվառման վրա: Իր «Հեղափոխականության» արտօնայակել պատրաստենածիքի հացեյին ուղղված ՀայՀոյանքներամ միայն, պատաստենածիքում մասնակցելով միայն, չուտ Հեշտ և, բայց Հենց այն պատճառով, վոր այդ չափազանց հեշտ և —այդ գժիարին և զբարարագույն խնդրի լուծումը չեւ: ՅԵՄՐՈՎԱԿԱՆ պատրաստենածիքում խնդրական Հեղափոխական պատրաստենածիքան Փրակցիս ստեղծելոր չառ ամենի գժիար և, քան Ռուսաստանում: Հարկամ: Բայց այդ այն բնդՀամար ճշմարտության մասնակի արտօնայարությունների միայն, վոր Ռուսաստանում 1917 թ. կոնկրետ, պատճակառությունն չափազանց որիցինալ սիտուացիոնում Հեշտ եր սոցիալիստական Հեղափոխության սկզբու, մինչդեռ այդ շարութակելը և դա մինչեւ վերջը Հասցենելը Ռուսաստանի Համար ամենի գժիարը կլինի, քան յեմրովական յերկիրների Համար: Յես գեռ 1918 թ. սկզբին առիթ ունեցա մատնանշելու այս Հանգամանքը, և դրանից Հետո յերկամյա փորձը լրիմի չափով Համաստեց այդպէս զատակությունը: Այսպիսի սպեցիֆիկ պայմաններ, ինչպէս՝ 1) խորհրդացին Հեղաշրջումը նրա շնորհիվ զարդարելիք իմպերիալիստական պատճերազմի վերջավորության հետ միացնելու, Հնարավորությունը, վորը (պատերազմը: Խմբ.) անհամատալի տանջանքներ պատճառեց բանվորներին և գյուղացիներին. 2) վորոշ ժամանակ իմպերիալիստական զիշտափեների Համաշխարհային հղորադույն յերկու խմբերի մահացու պայքարն ուղտաղ ործելու, Հնարավորությունը, խմբեր, վորանք չեյին կարող միանալ ընդդեմ խորհրդային թշնամու. 3) Համեմատառար յերկար քաղաքացիական պատերազմին դիմանալու Հնարավորությունը, վոր մասամբ առաջանում և շնորհիվ յերկորի միթիստարի չափերի և Հաղորդակցության վատ միջոցների. 4) գյուղացիության մեջ աշնոյիսի խորը բուրժուական-գեմոկրատական Հեղափոխական շարժման առկայությունը, վոր պրոլետարիատի կուսակցությունը Հեղա-

միսխանկան պահանջները վերցրնց գյուղացիների կուսակցությունից (սոցիալիստ-Հեղափոխականների, մի կուսակցությունից, վարն իր մեծամասնությամբ խիստ թշնամի յեր բոլշևիզմին) և միանդամեմբ իրազորենց դրանք չնորհիմ այն բանի, վորորորութարիստը նվաճեց քաղաքական իշխանությունը, — այսպիսի սպասիվիկի ազայմաններ Արևմայան Յեղրողայում այս չկան և այսպիսի կամ նման պայմանների կրկնումը շատ և ոյտրին չեւ Անա ինչու, ի միջի այլոց, — զնու մի կողմէ Թողարք մի շարք այլ պատճառներ, — սոցիալիստական Հեղափոխություն սկսելու Արևմայան Յեղրողայում ավելի ոժմար և, քան մեջ Այս գմբարությունը շշրջանցնելը մորթելը, Հեղափոխական նպատակներով սևակցիոն պատճառ ննաներն աղասպործելու գմբարին խնդրի շիրայով թաշնէլը մորթելը, խոկական յերեխայություն և Դուք ուղարկ և նոր հասարակություն առեղծել, և վախենում եք սևակցիոն պառամենառամ համորդած, նվիրված, Հերոսական կամունիսաններից պառամենառական լավ Փրակցիա սանդելու գմբարություններից Մի՞թե այդ յերեխայություն չեւ Յեթե Դարձ լիրինեխաը Գերմանիայում և Զ. Անդրանիկը Շվեդիայում նույնիսկ առանց վարից մասսայական աջակցության կարողացան ռեակցիոն պառամենառների խոկապես Հեղափոխական ողոտագործման որինակների տալ, ապա ի՞նչպես այս արագությամբ աճող մասսայական Հեղափոխական կուսակցությունը, մասսաների Հետպատերազմի յան Հիսութափման ու զայրույթի պարագաներում, ի վիճակի չեւ կոմունիստական Փրակցիա կանունու վատթարագույն պառամենառներում ։ Հենց այն պատճառով, վոր բանվորների և—ե՛լ ավելի—մանր գյուղացիների Հետամիաց մասսաներն Արևմայան Յեղրողայում անհամեմատ ավելի ուժեղ շամույթ, քան Ռուսաստանում, ներծծված են բուրժուական-դեմոկրատական և պառամենառական նախարարացրման գներով, Հենց գրա համար և այնպիսի Հիմնարկությունների ներսից միայն, վարդինին բուրժուական պառամենառներն են, կոմունիստները կարող են (և ակտոք և) տեսական, համառ, վոչ մի գմբարության առաջ կանող չամսող պայքար մզեն այդ նախարարացրման գները մերկացնելու, ցրելու, Հաղթահարելու համար։

Գերմանական ձախերը զանդապավում են իրենց կուսակցության վաստակություններից և Հուսահատության մեջ են ընկ-

նում, բանը հասցնելով գոռաջնորդներին ծիծաղելի քայլա-
մանը: Բայց այնպիսի պայմաններում, յերբ հաճախ հարկ և լի-
նում գոռաջնորդներին ընդհատակում թաղյնել, լավ, հուսափ, փորձված, հեղինակավոր գոռաջնորդները մշակելին առանձնապես
զժվարդում են, և այս դժվարությունները հաջողությամբ հաղ-
թահարել չի կարելի առանց լնդալ և անլեզար աշխատանքը միա-
ցնելու, առանց գոռաջնորդներին, ի միջի այլոց, նույն պատկա-
մենունկան առարկան փորձելու: Քննադատություններ ամե-
նախիստ, անպար, անհաջող քննադատություն — պեսաք և ուղղել
վոչ թե ընդդեմ պատրամենուարիզմի կամ պատրամենուական գոր-
ծունելյաւթյան, այլ ընդդեմ այն առաջնորդների, վորոնք չեն կա-
րողանում — և ամելի նրանց զեմ, վորոնք չեն ուղղված — պատրա-
մենուական ընտրությունները և պատրամենուական ամրիությունների հեղի-
նակավարի, կոմունիստավարի սպազուրծել: Միայն այս-
պիսի քննադատություններ — իրացած, իշարեն, անպեսաք առաջնորդ-
ներին արտաքինություններու վոխարքիններու: Հետ,
— ոպտակար ու արգյունավելու հեղափոխական աշխատանք կի-
սի, վոր կղաստիարակի միաժամանակ և՝ գոռաջնորդներին, վոր-
ուեսդի նրանք արժանի լինեն բանվոր զառակարգին և աշխատա-
վոր մասսաներին, և՝ մասսաներին, վորովեսդի նրանք ուսուուն-
մեցա զբուխ հանել քաղաքական զրությունից և համեստաց-
հաճախ շատ բարդ ու խճճված այնպիսի խնդիրներ, վորոնք այս
զրությունից են բղխում»:

* Են շատ քիչ հերթափորություն ունեցած ծանոթանակու իտալական
ժամանելիութիւն Անկանած, ընկ. Բորզիզան և նրա «Կոմմանիստ-
ուրիստականների» (Komunistista astensionista) ֆրակցիան իրավացի չեղ պա-
շմանական շմանելիցինության խնդրում: Բայց մի կետում նու,
ինձ թվում ե, իրավացի յեղաբար կորեկի յեղ գանել նրա «Սովետ» («Il So-
vieto»¹⁵) թերթի յերկու շամարից, ԱՄ 3 և 4, 18. I և I. II. 1920), ընկ. Սեր-
բրատի «Կոմմանիոզ» («Komunizmista»¹⁶) հրանալի ամսագրի շարք զբարյից,
ԱՄ 1—4, 1. X—20. XI. 1919) և իտալական բուրժուական թերթերի հառու-
կուր համարներից, վորոնց ինձ հաջողվեց ծանոթանալը, ընկ. Բորզիզան
և նրա ֆրակցիան իրավացի յեն Տուրատիի և նրա համակաների վրա արտօն հար-
ակութեաւում, վորոնց մեռմ են մի այնպիսի կուտակցության մեջ,
վորն ընդունել և նոր բուրյային իշխանությունն ու պրոլետարիատի զիկուտա-
շան, մեռմ են պարամենակ անզանեց, բայց և չարունակում են իրենց ամենա-
վասակար, հին սպարտակիստական քաղաքականությունը: Իշարեն, հանգը-
ւելով այս, ընկ. Սերբատին և իտալական սոցիալիստական ամրոջ կուտակցու-

ՅԻ՞ ՎՈ՞Չ ՄԻ ԿՈՄՊՐՈՄԻՍ

ՄԵՆՔ անունք, Փրանկֆուրտան բրոցյուրից թերված ցիտա-
տից, թե ինչպիսի վճռականությամբ են օձախներն առաջ քաշում
այս լոգունը: Տիուր և անսնել, թե ինչպես մարդիկ, վորոնք
անտարակույս, իրենց մարդուստ են համարում և ցանկանում են
մարդուստ լինել, մոռացել են մարդուզիցի հիմնական նշանառու-
թյունները: Աւա ինչ եր զրում 1874 թ. 33 կոմունար-բլանկիւս-
ների, մանիքինստի զմբ ենդելար, վորը պատեկանում և, Մարդու-
ուստ, այն հաղվագյուտ ու խիստ հաղվաղյուտ զրողների շարքին,
վորոնց յուրաքանչյուր խոչըր աշխատության յուրաքանչյուր
Փրանցում բավանդակության դարձմանունի խորություն կա.

Ե. Ա. Անց կամունիստներ ենց (պրում եյին իրենց մանիքիստում կոմու-
նար-բլանկիւսները), պարովնեան ուղամ ենց հանել մեր նորուակին, կանգ
շանելով միջնակյա կայարաններում, կոմունակուների շգնալով, վորոնց հե-
ռուցնում են միայն հոգթանակի որը և յերկարացնում են ուսկիւթյան ժամա-
նակաշրջանը:

Ե. Ա. Անց կամունիստները կամունիստներ են այն պատճառով, վոր
որոնց ըստը միջակ կայարանների ու կոմունակուների միջակ,— վոր
վոր թե նրանց իրենց, ոչ պատճառին զարգացման ընթացքն և ուսիգնել,—
պարզ տեսնում ու միշտ հետապնդում են մի վերջնական նպանառի դաստիար-
գերի վաշնացում և այնպիսի հասարակակարգի սահմանում, վարուեց այլուր չի
ընկի նողի ու արտադրության միջնաների մասնաւոր սեփականության ՅՅ
ըլունիքանները կամունիստ են այն պատճառով, վոր յարեակարում են,
թե յենքն լունի ուղամ են թակել միջակա կայարանների և կոմունակուների
վրայի, ուզու գործ միջնացում ե, և վոր մինի-ինչնի վոր նրանց հասուս
համատացում են—մատիզ սրերում տնօտիք, և իշխանությունը նրանց ձեռքն
ընկերի,—առա վազը չե մյամ որը ուշամանիզմը կմուգիքի ձեռնարն, յե-

Բրանն այսորիսի միայ են անում, վորն նույնպիսի խորը նուա ու վասնի և
սուսանում, ինչպես Հռնշարիայում, վորուս հռնշարուական պարմայի Տուրա-
տինեցը ներսից արտաստ եյին անում և՝ կուսակցաթյունը, և՝ Առերգույին իշ-
խանությունը: Ուղարսունիւստ-պատշաճնառակիւնը վերացներամբ արտիքի միայ
ուն հռնշարուական կամ անհասուստակամ վերաբերմանցը մի կոպէց օձախն կո-
մունակում և առաջ թերում, մյամ կոպէց, վորու շափով արդարաշնում և վերջի-
նես պայությունը: Ըսկ Անրատին բացահայտութենա անհրաժեշտի յի պատրա-
մամբ Տուրատին առնենազականության մեջ մեղադիմուքի («Կոմունիստ»,
ԱՅ), մինչդեռ հնաց իտալիան սոցիալիստական կուսակցությունն և անհ-
անզական, վոր այսորիսի սպառունիստ պարզամնատրներ և հանդուրժում,
ինչպես Տուրատին ու Ընկերությունն են:

Յեւ ուրդ իսկույն հեթ չի կարելի անել, ապա և իրենց կոմունիտեներ շնորհ
«Այս բնշ մանկական միամտություն և ուժովունակ անհամընթառքյանը
գործեց թեորետիկ արգումենտ ցուցազրեց» (մէ. Անդրկու, «Կոմունար-բլունիիտ-
ների ծրագիրը», գերմանեկան «Volksstaat»²²², 1874 Նմ 73 ուղ. թերթից 1877:
—1878 թ. թ. հազվածներ մազափառքից, ուսու. Թարդ-Հ. Պետր. 1919, հջ 52—53):

Ենդելոր նույն հոգվածում, իր խորը հարգանքն և արտահայ-
տում վայրանին և խոսում և վայրանին օտարվիճարկելի ծառույթ-
յանը մասին (վորը, Գեղի պես, միջազգային սոցիալիզմի խո-
շուազույն առաջնորդն եւր, քանի դեռ նրանց չեցին դաշտանունը
սոցիալիզմին 1914 թ. աղոստոսին): Բայց բացահայտ սիստեն նե-
ղելու չի թողնում առանց մանրամասն վերլուծության: Իշարին,
շատ ջանել և անփորձ, ինչպես և մանր-բարժուական նույնիսկ
շատ պատվելի հասակ անեցող և շատ փորձված հեղափոխական-
ներէ համար չափազանց «պատեզամովոյ», անհասկանալի և ան-
ճիշտ և թվում «կոմունիստիստ թույլատրելիք»: Յեզ շատ սովորա-
ներ (չափազանց կամ ուշ-ժուրծմածք պոլիտիկաններ լինելով)՝
դասում են ճիշտ այնպես, ինչպես ընկ. Լենինը բուժած ուղար-
տունիզմի անշվարեան առաջնորդները. «յեթե բոլշևիկներին
թույլատրվում և այս-ինչ կամպրումիսը, ապա ինչո՞ւ մեղ չթույլ-
լատրվի. ամեն անսակին կամպրումիս»: Բայց որունեալները, յո-
րանց դաստիարակվել են բարբառատիկ դործազուլներում (յեթե
վերցննենք դաստիարակույթին պայքարի միայն այս արտահայտու-
թյունը), սովորաբար հրաշալի կերպով յուրացնում են այն խո-
րապելիք (փիլիսոփայական, պատմական, քաղաքական, Հռոմե-
անական) ճշմարտությունը, վոր շարագրել և նազելոր: Յուրա-
քանչյուր պրոլետար ապրել և զործադրուց, ապրել և կոմունիս-
ները առելի ճնշողների և շահագործողների հետ, յերբ բանվոր-
ներն առելով ան յեղել նորից աշխատել կամ վոչ մի արդյունա-
քի չհասած, կամ ել իբննց որահանջների մասնակին բարեյացր-
մանը համաձայնելով: Ծուրագանչյուր պրոլետար, շնորհի մաս-
սարական պայքարի և զարակարգացին Հակաբըրությունների
խիստ որման այն պարադաների, վորոնցում նա ապրում և, ոչ-
առում և այն տարրերությունը, վոր կա այն կոմպրոմիսի, վոր
առելում են որյենկորի պայմանները (դործազուլավորների դժո-

*—«Ժղագրգական պետություն», Խմբ..

մարդոցն ապօքաստ և, կողմնակի աշակեռությունը չկա, նրանք չափա-
դանց ոռվաստանց ևն յեղել), այն կոմպրոմիսի, զոր մու մի չա-
փով չի նմադեցնում այսպիսի կոմպրոմիս կեցած բանվորներէ
հեղափոխական նորիքությունն ու հետագա պայտարի պատ-
րուականությունը, —և, մյուս կողմից դավաճանների կոմպրո-
միս միջն, զորուք որչեկատի պայմանների վրա յնն բարդուալ
իրենց մորթապաշտությունը (սորայկրբեխերներն ել ևն էկոմպրո-
միշն կնքում), իրենց վախկուությունը, կապիտալիստներին ծա-
ռայություն մասաւցելու իրենց ցանկությունը, իրենց յերթար-
կումը կապիտալիստների կողմից արված ահճո, յնընեմն հորդո-
րանցներին, յերբեմն վողորդություններին, յերբեմն շաղութ-
թանցներին (դավաճանների այսպիսի կոմպրոմիսներ առանձնա-
պես չատ և առլիս անդիքական բանվորական շարժման պատմու-
թյունն անզութեան արեւշ-յուններնի առաջնորդների կողմից,
բայց թե այս կամ այն մեռն համարյա ըսլոր բանվորները բոլոր
յերկիրներուց համահան յերեսույթ զիտել են):

Հասկանալի չե, բացառիկ գմւար և բարդ յեզակի զնութեանը
ևն լինում, յերբ մնաւույն ջանքերով միայն հաշողվում և այս
կամ այն էկոմպրոմիսիք իսկական բնույթը ճիշտ վորոշել, —
ինչպես սպանություն դեռքն ևն լինում, յերբ չատ գմւար և
վճռել, թե արդյուշ այդ միանգամացն արդարացի և նույնիսկ
ողարտագիր սպանությունն եր (որինակ, տնհամժեշտ սպաշտապա-
նությունը), թե աններն ևն անփութություն կամ նույնիսկ նրբու-
թյամբ իրազործված խարդախի մի ծրադիր: Հասկանալի չե, ջա-
ղաքականության մեջ, վորածեղ խնդիրը վերտանքում և յերբեմն
զառակաբարդիչ և կուտակցությունների միջն յեղած ծայր առան-
ձան բարդ — ազգային ու միջազգային — վուխաղարձ հարա-
բերություններին, չատ ու չատ անհամեմատ ավելի գմւար
գմւարի կլինեն, քան ողբաշտուլի ժամանակի որինական էկոմ-
պրոմիսիք, կամ ել շարայկրեխերի, դաշտաճուն առաջնորդի դա-
վաճանական էկոմպրոմիսիք և նման հարցն ե: Այսպիսի զնութ-
առն կամ այսպիսի ընդհանուր կանոն (ազո՞ւ մի կոմպրոմիս)՝
հնարել, վորը ովհասանի լիներ բոլոր զեղչերում, — անհնթեթու-
թյուն և: Պետք և ուսների վրա սեփական պլուս ումնեալ՝ յուրա-
քանչյուր առանձին դեպքում զգուի հանել կարգանալու

Համար։ Դրանումն և հենց, ի միջի այլոց, կուսակցական այն կազմակերպությունների և կուսակցական այն առաջնորդների նշանակությունը, վորոնք արժանի յնն այս կոչման, վարպետի տօվյալ գասակարգի⁹ բոլոր մասնագիտ ներկայացուցիչների աւելի կան, Համար, բարձագան, բարձակազմնի աշխատանքով անհրաժեշտ գիտելիքներ, անհրաժեշտ փորձ, անհրաժեշտ — պիտի լիքիցից և փորձից գատ — քաղաքական հոսանքություն մշտելի քաղաքական բարդ հորցերն արագ ու ճիշտ լուծելու համար։

Միաժին և բոլորունին անփորձ մարդիկ յերեակայում են, թե բավական և ընդունել կամպանիաների թույլարկելիությունն ընդհանրապես, — և արդեն իսկ կշնչվի ամեն մի սահման ուղղութեանիցի, վորի դեմ մենք անհաշտ պայյառը ենք մզում և պիտի մզենց, — և Հեղափոխական մարդուղմի կամ կոմունիզմի միջն բայց այսպիսի մարդկանց, յեթե նրանք դեռ չդիման, վոր իւր բնության, թե՛ Հասարակության մէջ բոլոր սահմանները շարժական են և վորոշ չափով պայմանական են, վոչ մի բանով չի կարելի ոզնել, բացի յերկարագուն և առացմամբ, զաստիորակմամբ, լուսավորմամբ, զաղաքական ու կենացական փորձով։ Յուրաքանչյուր առանձին կամ սպեցիֆիկ պատմական մամենափ քաղաքականության դրունական հարցերում կարենոր և զատել կարուղանու այն հորցերը, վորոնցում յերեան և զայլիս անթույլատելի, դավանանական, Հեղափոխական դաստիարակի Համար կործանարարությամբ առանձին մարդուավորող կոմունիստների ովհանությունների ուղիւավորությունների, և պրանք ուարդարանելուն, դրանց զեմք պայյառնելուն ուղղել բալոր ճիկությունը 1914—1918 Թվականների իմարեխալիստական պատերազմի ժամանակ, վոր մզում եր Համաստացագես ամուղղակային ու զիշտակէ յերկիրների յերկու խմբերի միջև, ուղարսունիզմի այսպիսի դիմաւիրակությն, Հիմնական անունից սոցիալ-Համար։

* Յուրաքանչյուր զատիարագում, նույնիսկ տառապէ լուսավորված յերկը ուայմաններում, նույնիսկ ամենատառապէացուց և մամենափ ուարականների զատիարակությամբ նախեկան բարձր ուժերի բացառի բարձր վերելքի զրություն մէջ զանվաց յերկում մշշու կան—և, քանի զեւ զայյաթյուն ունեն զատիարագիլը ըստի զեւ լրիջ շափու չի ամբազնդվել չի հաստատվել, իը սեղուկան նիմունու զբա չի զարդարել անզատակարգ հաւաքականությունը, անիրաւավելի ուրենի կլիմին—զատակարգի ախպիսի ներկայացուցիչներ, վորոնց չեն ժամանում և անշնունակ են ժամանելու կատարայիշմը մասնաներին ներադ հաղուստական չեն լինի, յեթե դու այդուն լինենք։

նիդուն եր, այսինքն՝ «Հայրենիքի պաշտպանության» աշակցությունը, վորոն այսպիսի պատերազմում՝ իրականությունը հավաստրվում եր «իր բուրժուազիայի կողոպտչական շահերի պաշտպանության»։ Պատերազմից հետո՝ կողոպտչական ըլլուհի լինային պաշտպանությունը, իր յերկրի բուրժուազիայի հետ ուղղակի համանուշակի գոյշինքների պաշտպանությունն ընդունմ հեղափոխական օրբուլատորիատի և «բորհըդային» շարժմանը բուրժուազիան վեմոկրատիայի և բուրժուական պատրամնատարիզմի պաշտպանությունն ընդունմ «Առորհըդային» իշխանությանը — որանը ելին այն անթույլատրելի և դամանանական կոմպրոմիսների դիմավորածույն արտահայտությունները, վորոնք իրենց դումարում, հեղափոխական պրոլետարիատի և նրա գործի համար կործանաբար ոպորտունիզմ ելին տալիս։

«... Անհայն վճռականությունը մերժել ամեն մի կամպոսիտ մյուս կուսակցությունների էլու... իսուսունագիւնն և համաձայնությունների մյուն մի քաղաքականությունը...»

Դրում են դերմանական ձախերը ֆրանկֆուրտյան բրոցյուրում։ Զարմանալի յն, վոր այսպիսի հայացքների անը լինելով՝ այդ ձախերը վճռականապես չե՞ն գատապարտում բոլշևիզմը։ Զե՞ վոր չի կարող պատահել, վոր դերմանական ձախերն իմացած չընեն, վոր բոլշևիզմի ամբողջ պատմությունը, թե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, թե՛ ոքանից հետո, լինել և խուսանավման, համաձայնողականության, մյուս և այս թվում բուրժուական կուռակցությունների հետ կոմպրոմիսների դեղքերով։

Միջադային բուրժուազիայի տապալման համար պատերազմ մղել, մի պատերազմ, վոր հարյուր անդամ ավելի դժվար, յերկարատեն, բարդ է, քան սկսությունների միջն մղվող սովորական պատերազմներից ամենահամառը, և առաջուց հրաժարվել խուսանավմելուց, թշնամիների միջև յեղած շահերի հակասության (թեկուղ և ժամանակավոր) ոգտագործումից, հասրավոր (թեկուղ և ժամանակավոր, անկայուն, յերերուն, պայմանական) դաշնակիցների հետ համաձայնության դարձուց ու կոմպրոմիսներից, մի՞թե զա անսահման ծիծաղելի բան չեւ Մի՞թե զա նման չեւ այն բանին, վոր դեռ չետազուլած և մինչև այդ անմատչելի սարը դժվարին վերելք կրտարելիս մենք առաջուց

Հրաժարով յերբեմն զիդաց զնալուց, յերբեմն Հետ դառնալուց, մի անգամ ընտրված ուղղությունից հրաժարվենաւ և տարբեր ուղղությաններ փորձելուց։ Յեզ այսպիսի մարդկանց, մարտնչող այդ առաջնան ստիալ զիտակից ու անօնութ են (լույ և դեռ, յեթև ու բաշտարգումում և նրանց յերիտուարդությամբ։ յերիտատարգուներին առաջած ինքն և հրաժարմայնը մարտնչությաններ պատրաստուի), կարող ելին պաշտպանե՞լ, — մինչեւյն և, ուղղակի թև անուղղակի, բացահայտ թե թագուն, ամրողամբին թե մասամբ, — Հորանգահիւն կամունիտական կուսակցության միջանք անդամները։

Պույնուարիտոնի առաջին սոցիալիստական հեղափոխությունից Հետո, մի յերկրում բուրժուատիյային տապալելուց Հետո, այս յերկրի պրոբետարիտուր յերկար ժամանակ ավելի քայլ և մնան, քան բուրժուատիյան, պարզապես արգեն վերջնին ինսերնացիոնալ հակայական կապերի չնորհեցի, արև կապիտալիզմի և բուրժուատիյի տարերային և մշտական վերականցնման, վերածնման չնորհեցի, վոր առաջ են բերում բուրժուատիյային տապալագ յերկրի մանր ապրանքարտադրողները։ Ավելի հզոր հակառակորդին հաղթելի յն միայն ուժերի մեծադույն լարումով և պարտադիր կերպով, մանրուկրկիստ, խնամքով, զգույշ, հմտութեան սկսութութելով թե թշնամիների միջն դոյցություն անհետով տեմն մի, թեկուղ անհշան, ճնեղքածք, տարբեր յերկերների բուրժուատիյայի և առանձին յերկերների բուրժուատիյայի տարբեր խօսակցություն, թե ամեն մի, թեկուղ և չնչին հնարավորություն՝ մեռք բերելու մասսայական գաշնակից, թեկուղ ժամանակավոր, տատանվող, անհաստատ, անհուսալի, պայմանական մի այս չի հասկացել, նա վուշինչ չի հասկացնէ մարգարելով և դիտական, ժամանակակից սոցիալիզմից ընդհանրապես։ Ով գործնականութեն, բավական յերկար ժամանակվա ընթացքում և քաղաքական բավական բազմադան դրություններում, չի տպացուցել, թե կարող ե իրոք կիրառել այս նշարտառությունը, նա զեռ չի սովորել ողնել հեղափոխական դասակարգին ամրոց աշխատավոր մարդկությանը շահագործողներից աղատադրելու համար նրա մզած պայքարում։ Յեզ այս ամբողջ ասածը համա-

սարատպես վերաբերում և պրոլետարիատի կողմէց քաղաքական իշխանություն նվաճնելում նախորդող ու հաջորդող ժամանակաշրջաններին:

Մեր թեորիան դոգմա չեւ, այլ գործոզաւրյան ուղեցույց — ուստի եյին Մարքսը և Անգլիան²¹ և այնպիսի ռուսականավոր մարքսիստների, ինչպես Կարլ Կառլցիու, Ռուսու Բառերի և դրանց նմանների մեծադույն սիստեմ, մեծադույն հանցանքն այն եւ, վոր նրանց այս Հասկացան, չկարողացան կիրառել պրոլետարիատի հեղափոխության ամենակարևոր մոմենտներում: «Քաղաքական դրսունեցությունը Ներկայի պրոսպեկտի մայթը չեւ (Պատերազմի միանուամայն ուղիղություր փողոցի մաքուր, լոյն Հարթ մայթը), հաճախ առում եր դեռ նախամարցոյան շրջանի ուստի մեծ սոցիալիստն ։ Գ. Զերնիշնեկին²² միուս հեղափոխականները, Զերնիշելիսկու, Ժամանակներից սկսած, անթիվ դուռը են տվել այս ճշմարտությունն անտեսելու կամ մոռացության տալու համար: Գեաց և ամեն ջանք թափել, ինչ զնով ել լինի, վոր Արևմայան Ցելյուպայի և Ամերիկայի մայս կոմունիստներն ու բանիոր դասակարգին նոյիրված հեղափոխականներն այնքան քանի չմնարքն այս ճշմարտությունը յուրացնելու համար, ինչ պես հետամնաց ուսւաստանցիները:

Թուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատները մինչև յարիզմի անկումը բազմաթիվ անդամ ոգտվում եյին բուրժուական լիբերալների ծառայություններից, այսինքն՝ նրանց հետ բազմաթիվ պրակտիկ կոմպրոմիսներ եյին կնքում, իսկ 1901—1902 թվականներին, զեր նախօն բոլշևիզմի ծագումը: «Այսքայի հին խմբաղբությունը (այս խմբաղբության մեջ մանում եյին Պետականությունը, Ականուրովը, Զասուլիչը, Մարտովը, Գոտրենովը և յեն) ձևական քաղաքական դաշինք կնքեց (ճիշտ եւ, վոյ յերկար ժամանակով) Ստրուվեյի²³, բուրժուական լիբերալիզմի քաղաքական առաջնորդի հետ, միևնույն ժամանակ կարողանալով առանց դադարեցնելու իդեալական և քաղաքական անողոք ուայքար մզել բուրժուական լիբերալիզմի և նրա ազգեցության ամենաշնչին արտահայտությունների դեմ բանվորական շարժման ներսում: Բոլշևիկները միշտ շարունակում եյին նույն քաղաքականությունը: 1905 թվականից նրանց սիստեմատիկաբար որաշտպանում եյին բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ

ընդունմ լիրերալ բուրժուազիայի և շարիդմի, յերբեք չհրաժարվելով միենալոյն ժամանակ բուրժուազիային ընդունմ ցարիզմի աջակցելուց (որինակ, ընտրությունների յերկրորդ առաջինում կամ վերաբէնարկությունների ժամանակ) և չղագարեցնելով ամենատանշաւա խզեական ու ջաղաքական պայքարն ընդունմ բուրժուական-Հեղափոխական ոյցուղացիուսկան կուսակցության, «սոցիալիստ-Հեղափոխականների», մերկացնելով նրանց վորպես մանր-բուրժուական գեմոկրատների, կեղծ կերպով իրենց սոցիալիստների շարքը դասողների: 1907 թ. բոլշևիկները, կարճ ժամանակով, ձեւական քաղաքական բլոկ կնքեցին Դումույի ընտրություններին «սոցիալիստ-Հեղափոխականների» Հետ: Մենչեւ ինքների հետ մենք 1903—1912 թվականներին միջանի տարավ միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ ելինք ձևականորեն՝ յերբեք չղագարեցնելով խոնական և քաղաքական պայքարը նրանց զեմ, վորպես բուրժուական աղջեցությունը պրոլետարիատին հաղորդողների և ոպրորոշմենուների զեմ: Պատերազմի ժամանակ մենք վորոշ կոմունիստին ելինք ինքեւ «կառուցկիականների», ձախ մենշևիկների (Մարտով) և մասմար «սոցիալիստ-Հեղափոխականների» (Զերնով, Նատանոսով) Հետ, նրանց հետ միասնին նստելով Ցիմմերվալդում և Կինտալում և ընդհանուր մանիֆեստներ բաց թողնելով, բայց մենք յերբեք չենք դադարեցրել ու թուլացրել իդեական-քաղաքական պայքարն ընդունմ «կառուցկիականների», Մարտովի, Զերնովի (Նատանոսով մնալով 1919 թ., նա մեղ միանգամայն մոտիկ, մեզ հետ համարյա համերաշխ համերաշխ «Հեղափոխական կոմունիստականությունիկ եր³⁴): Հոկտեմբերյան Հեղաշրջման մոմենտին հենց մենք վո՞չ թե ձևական, այլ խիստ կարեռ (և շատ Հաջող) քաղաքական բլոկ կնքեցինք մանր-բուրժուական դյուղացիության հետ, ընդունելով ամբողջովին, առանց վորեւե փոփոխության, ևս-երական աղքարաւային ծրագիրը, այսինքն՝ անտարակույս կոմպրոմիս կնքեցինք, վորպեսզի ապացուացնենք գյուղացիներին, վոր մենք վո՞չ թե նրանց մայորացնել ենք ցանկանում, այլ ուղում ենք նրանց հետ համաձայնության դալ: Միաժամանակ մենք առաջարկեցինք «ձախ ես-երներին» (և շուտով իրազրծեցինք) քաղաքական ձևական բլոկ, կառավարության մեջ մասնակցելու պայմանով, «ձախ ես-երներին», վորոնք լումնեցին այս

րըսկը Բընետի Հաշտությունը կնքնլուց հետո և ապա 1918 թ. Հուլիսին Հասան զինված ապստամբության ու Հետազայռմ մեր դիմ զինված կոմիտեին:

Դրա համար ել Հասկանալի յէ, վոր դերմանական ձախերի Հարձակումները Գերմանիայի կոմունիստների կուսակցության կենտրոնի վրա այն բանի համար, վոր նա թույլ և տվյալ մտածել շահեաների (Գերմանիայի անկախ սոցիալ-գեմոկրատական կուսակցություն, կուսակցիաներ) հետ ըլոկ կնքելու մասին, մեզ միանգամայն վոչ-լուրջ են թվում և ակնառու կերպով ապացուցում են «Ճախիսերի» ամիրավացիուրյումք: Մեզ մոտ թուաստանում ել կային աղ մենչեւիկներ (վոր մտան կերպներու կուսակցության մեջ), վորոնց համապատասխանում են դերմանական Շայդեմաններին, և մաս մենչեւիկներ (Մարտով), վորոնց ոստ զիցօտյի մեջ եյին աղ մենչեւիկների Հանդեպ և Համապատասխանում են գերմանական կուսակցիաներին: Բանվորական մտասների աստիճանական անցում մենչեւիկներից բոլենիկներին մենք պարզ նկատում ենինք. 1917 թվականին՝ Առաջնուրդների առաջին Համառուտական Համագույմարում, 1917 թ. Հռնիսին մենք ընդումենը 13 % ունեյինք: Մեծամասնությունն ես-երների և մենչեւիկների կողմն եք: Խորհուրդների յերկրորդ Համագույմարում (25 հոկտեմբերի 1917 թ. Հ. ա.) մենք մայների 51 % ունեյինք: Ինչո՞ւ Գերմանիայում բանվորների նույնականի, միանդամայն համաստ մղումն աջից մաս ուժեղացրեց վոչ թե միանգամից կոմունիստներին, այլ նաև «անկախների» միջակա կուսակցությանը, թեև այս կուսակցությունը քաղաքական ինքնուրույն վո՞չ մի իոդեա, վո՞չ մի ինքնուրույն քաղաքականություն չուներ, այլ միայն տառանվում եր Շայդեմանների և կոմունիստների միջև:

Ակներեւ և, զրա պատճառներից մենքը գերմանական կոմունիստների սխալ տակտիկան եր, վորոնց պետք եւ աներիցուզ ու աղնվորնեւ խոստովանեն այս սխալը և այն ուղղել սովորեն: Սխալը սեակցիոն, բուրժուական պարլամենտում և սեակցիոն արմիություններում մասնակցելու բացառման մեջ եր, սխալն այն «Ճախ» մանկական հիվանդության բաղմաթիվ արտահայտությունների մեջ եր, վորն այժմ յերեան յեկամի և վորն ամելի լավ, ամելի արագ և որդանիղմի Համար ավելի ուղարկար ձևով կրուժովի:

Դերմանստական Հանեկասի սոցիալ-գեմոկրատական կուռական շությունը՝ բացահայտ կերպով անհամատան և ներում։ Հին ոպորտունիտական առաջնորդների (Կառուցկին, ՀիլֆԵրդինդը, Պղալի չափավով, ըստ յերեսութին, Կրիստինը, Լեզերուրը և ուրիշները) կողքին, վորոնք ապացուցեցին Խորհրդային իշխանության և պրոլետարիատի դիմատուրայի նշանակությունը Հասկանալու իրենց անընդունակությունը, նրա հեղափոխական գոյացարը զեկավարելու իրենց անընդունակությունը, այս կուսակցության մեջ կողմվել ու զարժանալի արագությամբ անում և ձախ, պրոլետարական թեր։ Այս կուսակցության (վորն ունի, կարծեմ, մինչև ¾ միլիոն անդամ) հարյուր Հայություր անդամները պրոլետարներ են, վորոնք հետացել են Շայդեմանից և արագությամբ դեպի կոմունիզմ են զեռում։ Պրոլետարական այս թերն անկախների Լայացիոնի Համագումարում (1919) արգեն առաջարկել և անհապաղ ու անզայման միանալ III Բնակենացիոնալին։ Կուսակցության արդ թերի հետ գիտմարտիւր ունենալուց յերկուակտ կրելն ուղղակի ծիծագելի յէ։ Ընդհակառակութիւն, կոմունիստների համար պարտադիր և նրանց հետ կոմպրոմիսի հարմար ձև մնառել և զանել, այնպիսի կոմպրոմիս, վորը մի կողմից գյուրացներ ու արագացներ այս թերի հետ անհրաժեշտ յիսկառար ձուլումը, իսկ մյուս կողմից՝ վոչ մի կերպ չնեշեր կոմունիստներին՝ «անկախների» ոպրոտունիտական աջ թեր դեմ իզեական-քաղաքական պայքար մղելու գործում։ Հաշմառար, կոմպրոմիսի հարմար ձև մշակելը հետո չի լինի, սակայն շառլատանը միայն կերպազնար դերմանական բանվորներին և գերմանական կոմունիստներին Հաղթանակի «հեշտ» ուղի խռոտանալ։

Կաղիտալիդմը կառկատալիզմ չեր լինի, յեթե պղումու պրոլետարիատը շրջապատված չիներ չափազանց խայտարգեստ անցման տիպերի մասսայով՝ պրոլետարից մինչև կրոսապրոլետարը (ով կիսով չափ և միայն ապրումատի միջոց Հայթայթում աշխատանքային ուժի վաճառմամբ), կիսապրոլետարից մինչև մանր գյուղացին (և մանր արհեստավորը, տնայնադործը, ընդհանրապես վորք անտեսատերը), մանր գյուղացուց մինչև միջակ գյուղացին և այլն, յեթե հենց պրոլետարիատի իր մեջ բաժանումներ չինենյին ավելի կամ պակաս զարդարած խավերի,

Հայքինակակցական, պրոֆեսիոնալ, յերբեմն կրանական և այլ
միտմանների: Իսկ այս բոլորից անհրաժեշտություն — և
անզայման անհրաժեշտություն և բղխում պրոլետարիատի
ավանդաբարդի համար, նրա դիտակից մասի համար, կոմունիստա-
կան կուսակցության համար՝ խուսափավման, համաձայնու-
ղականության, կոմորոմիաների զիմել ողբուժաբների տարրեր
խորերի, բանվորների և մանր անառատիբուլեների դանագալան
կուսակցությունների հետ, և ուս բղխում և բացարձակ անհրա-
ժեշտությամբ: Ամբողջ գործը այս առաջինին պրոլետա-
րական գիտակցության, հեղափոխականության, պայքարի և
հաղթանակի ունակության ընդհանուր մանարդակի բարձրաց-
ման և վոչ թե իջնցման նորուստիկներով կերպունել կարստա-
նալի և: Գետք և նկատել, ի մեջի այլոց, վոր բոլշևիկների հաղ-
թանակը մենչևիկների վրա վո՛չ միայն մինչև 1917 թ. Հռիտեմ-
րերյան հեղափոխությունը, այլև դրամից հետո ել պահանջում
եր խուսանավման, համաձայնողականության, կոմորոմիաների
տակադիա կիրառունել, հասկանալի յե այնպիսու և այնպիսների,
վոր գյուրացներ, արագացներ, ամբապնդեր, ուժնդացներ բոլ-
շևիկներին ի հաշիվ մենչևիկների: Մանր-բուրժուական գեմո-
կրատները (իսկ այս թվում նաև մենչևիկները) անխուսափելիո-
րեն տառանդում են բուրժուազիայի և պրոլետարիատի միջև,
բուրժուական գեմոկրատիայի և խորհրդացին կարգի միջև, ու-
ժորմիզմի և հեղափոխականության միջև, բանվորաւիրության
և պրոլետարիան դիկտատուրայից յերկյուղ կրելու միջև և
այլն: Կոմունիստների ճիշտ տակադիկան պիտի լինի այս տառա-
նումներն ուստացործելու և վոչ թե զրանք անտեսելու մեջ. ոգ-
տագործումը պահանջում և զիջումներ անել այն տարրերին, այն
ժամանակ և այն չափով, վորոնց, յերբ և ինչ չափով զանոնում են
գերի պրոլետարիատը, — միաժամանակ պայքար մղելով նրանց
զեմ, ովքեր զանում են զետի բուրժուազիան: Ճիշտ տակադիկա
կիրառելու հետևանքով մենչևիզմն ավելի ու ավելի քայլայվեց
և քայլայլում և մեղնում, համառությամբ մեկուսացնելով
ոպրոտեխնուսական առաջնորդներին և մեր բանակը վիխաղը-
լով լավագույն բանվորներին, մանր-բուրժուական գեմոկրա-
տիայի լավագույն տարրերին: Դա տեսական պըոցես և, և հապ-
նել «վորոշմամբ» վո՛չ մի կոմորոմիս, վո՛չ մի խուսանավում»,

կարելի յև միայն զնասել հեղափոխական պրոլետարիատի ազգա-
ցության ուժն զացման և նրա ուժերի ավելացման զործին:

Վերջապես, «ճախերի» անկառական սխալներից մեկը՝ Գեր-
մանիայում նրանց ուղղագիծ պնդումն և Վերսալի հաշուությունը
չընդունելու վրա: Վորքան ավելի քաղաքացիք և «կառեր», վոր-
քան ավելի «վճռական» և անապելացիոն և ձեռներպում այս
Հայացքն, որինակ, Կ. Հորները, այնքան դա ավելի պակաս խե-
լացի յև դուքս զալիս: Բավական չեն հրամարվել ապահովին բոլ-
շևիդիւ (Խոտֆենբերգի և մյունիերի) աղաղաքող անհնիթեթու-
թյուններից, վորը հասար մինչև բուրժուազիայի հետ ըլոկի մեջ
մտնելն Անտանտի դեմ պատերազմելու համար, միջադարյին
պրոլետարական հեղափոխության ժամանակակից պայմաննե-
րում: Պետք եւ հասկանալ, վոր արմատապես սխալ և այն առկ-
տիկոն, վորը չի թույլ տալիս, վոր Աորհրդային Գերմանիան (յե-
թե շուտով առաջանար Աորհրդային գերմանական հանրապետու-
թյուն) պարուազորչի վորոչ ժամանակ ընկունելու վերսալի հաշ-
տությունը և յենթարկիի նրան: Դրանից չի հետևում, թե զան-
կախականներն իրավացի եյին այն ժամանակ, յերբ տառը
եյին քաշում, քանի դեռ կառավարության մեջ նստած եյին Շայ-
գեմանները, քանի զեռ չեր տասպալիած Աորհրդային իշխանու-
թյունը Հանդարիայում, քանի զեռ վեճեննայի խորհրդային հե-
ղափոխության կողմից Աորհրդային Հունդարիային ոզնության
դալու Հունդարությունը չեր բացառված, —յերբ այն ժամանակիւ
պայմաններում առաջ եյին քաշում վերսալի հաշտությունն ստո-
րագրելու պահանջը: Այն ժամանակ անկախականները շատ վատ
եյին խուսանշալում և մասնպրում, վորովհետեւ ավելի կամ պահառ
շափուզ իրենց վրա եյին առնում դամանան Շայդեմանների պա-
տասխանատվությունը, ավելի կամ նվազ չափուզ ոլորչում եյին
Շայդեմանների հետ անողոք (և ամենասառնարյուն) զասակար-
դային կռիւ մզելու անսակետից զանդասակարդային կռմ
«վերդաստակարդային» տեսակետին:

Բայց այժմ զըստությունն ակնհայտ կերպով այնպես և, վոր
Գերմանիայի կոմունիստները չպետք եւ կապեն իրենց ձևոքնը
և Վերսալի հաշտության պարտութիր ու անօդայման մերժում
խոստանան կոմունիզմի հաղթանակի դեպքում: Դա հիմարու-
թյուն է: Պետք եւ տաել — Շայդեմաններն ու կառաջիկականները

մի շարք դավաճանություններ գործնեցին, վորոնք դժվարացրին (մտամբ ուղղակի տապալեցին) Առըհրդային Ռուսաստանի, Առըհրդային Հունգարիայի հետ դաշինք կունշու գործը։ Մենք, կամունիսաներս, ամեն միջոցներով կրյուրացնենք ու կնայսապատրաստինք այսուհետ դաշինք կունշը, ըստ վորում Վերառմի հաշտությունը մենք բոլորուին ել պարտավոր չենք անպայման մերժել և այն ել անհապաղ։ Հաջողությամբ այն մերժելու հարցավորությունը կախված ե վո՞չ միայն դերմանական, այլև խորհրդային շարժման միջազգային հաջողություններից։ Այս շարժմանը Շայդեմաններն ու կառուցկիականները խանգարում ենին, մենք դրան ողնում ենք։ Ահա վորն և զործի եյությունը, վորն և արմատական տարբերությունը։ Ենոյ յեթե մեր դասակարգային թշնամիները, շահագործողները, նրանց սպասավորները, Շայդեմաններն ու կառուցկիականները, դերմանական և միջազգային խորհրդային շարժումն ուժեղացնելու, և՝ դերմանական, և՝ միջազգային խորհրդային հեղափոխությունն ուժեղացնելու հարցավորությունների մի ամբողջ շարք բաց թողին, ապա մեղքը նրանց վրա յև ընկնում։ Առըհրդային հեղափոխությունը Գերմանիայում կուժեղացնի միջազգային խորհրդային շարժումը, վորն ամենուումնոյ պատման և (և միակ հուսալի, անձագլելի, համաշխարհային մասշտաբով հզոր սպասավորը) ընդունեմ վերսալի հաշտության, ընդունեմ միջազգային իմպերիալիտի ընդհանրապես։ Վերսալի հաշտությունից աղասովելու որարտադիր և անպայման ու անհապաղ առաջին տեղը դնել, իմպերիալիումի մնջումից իմպերիալիզմի կողմից մնշված այլ յերկիրների արատագրման հարցից առաջ, — այդ քաղաքնիական նացիոնալիզմ և (Կառուցկիներին, Հիլֆերդինեղներին, Ռաստ Բառերներին և Ընկե. արժանի), և վոչ թե՝ հեղափոխական ինտերնացիոնալիզմ։ Ենվրոպական խոշոր յերկիրներից վորում մեկում, այս թվում նաև Գերմանիայում, բուրժուարդիային տապալելը միջազգային հեղափոխության համար այնպիսէ պլյուս և, վոր ի սեր դրա կարելի յև և պետք և, — յեթե այդ պետք էլենի, — Վերսալի հաշտության ավելի յերկարան։ գոյուրյան համաձայննել։ Ենթե Ռուսաստանը մենակ կարողացավ, հեղափոխության համար աղջուռ կիրակալով, Բենտի հաշտության միջանի ամսին դիմանալ, ապա վոչ մի անհարին բան չկա, վոր

Խորհրդային Դերմանիան, Խորհրդային Ռուսաստանի Հետ զաշնակցած, Հեղափոխության Համար ոգտակար կերպով տանի Վերսալի Հաշտության ավելի յերկարանեւ դոյցությունը:

Ֆրանսիայի, Անգլիայի և այլ խմբերիալիստները պրովոկացիայի յև յննիարկում դերմանական կոմունիստներին, — նրանց առաջ թակարդ են զնում՝ ըլլուցե՛ք, վոր զուր շնչ ստորագրի Վերսալի Հաշտությունը: Խսկ ձախ կոմունիստները, յերեխաների պես, ընկնում են իրենց առաջ դրան թակարդի մեջ, փոխանակ վարպետությամբ մանելիքնեւու խարդախ և ավշալ մուննառմ ավելի ուժեղ թշնամու զեմ, փոխանակ նրան տույուռ-ըլլում մենք Վերսալի Հաշտությունը կատարադրենք: Այսաջուց ձեռքերը կազել, բացորոշ կերպով տաել թշնամուն, վարն այժմ մեղնից ավելի լավ և զինված, թե կեռվենք արդյոք նրա հետ և յերը, — դա հիմուրություն և, և վոչ թե Հեղափոխականություն: Ճակատամարտն ընդունել այն ժամանակ, յերբ դա բացահայտուն ձեռնուու յե թշնամուն և վոչ թե մեզ, հանցանք և, և միանուածայն անպետք են Հեղափոխական դաստիարդի ոյն-պիսի քաղաքակենները, վորոնք չեն կարողանաւ «բառանալում», Համաձայնողականություն, կոմունիստները անել, վորուուզի խուսափեն բացահայտուին անձնուառ ճակատամարտից:

IX. «ԶԱԽ» ԿՈՄՈՒՆԻԶՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ²⁵

Անդիքայում կոմունիստական կուսակցություն զեռ չկա, բայց կա թարմ, լոյն, հզոր, արագ աճող, ամենալավագուշույն հույսեր տածելու իրավունք ավող կոմունիստական շորժում բանվորների ըրջանում. միքանի քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ կան («Բրիտանիական սոցիալիստական կուսակցություն», «Հարավային Ռւելսի սոցիալիստական ընկերություն», «Բանվորական սոցիալիստական Փեղերացիա»), վորոնք ուզում են կոմունիստական կուսակցություն ստեղծել և միմյանց հետ բանակցություններ են վարում այդ մասին: «Բանվորների զրեղնուում» թերթում (Հատոր VI, № 48, 21. II. 1920), վերոհիշյալ կազմակերպություններից վերջինի շաբաթական որդանում, վոր խմբազրում ե ընկ. Սիլվիա Պանկիսերսոր, զնուել-

ված և նրա քննունիսիստական կուռակցության շուրջը՝ Հոգվածը 26: Այստեղ շարադրվում և լլլ ինտերնացիոնալին միանալու, պատրամենուարիզմի փոխարեն խորհրդային ոխուեմը և պրոյեկտարիստի դիկտատուրան ընդունելու հիման վրա միասնական կոմունիստական կուռակցություն կազմելու մասին վերոհիշյալ չորս կազմակերպությունների միջև տեղի ունեցող բանակցությունների ընթացքը: Դուրս և զայթ, վոր միասնական կոմունիստական կուռակցություն անհապաղ տաեղծելու դիմումոր արդելքներից մեկը պառակմանտինտին մասնակցելու, և նոր կոմունիստական կուռակցությունը հին, պրոֆեսիոնալիստական, տառվելասպասություն-յունիտներից կազմված, ոպրոտունիստական և սոցիոլ-շովինիստական «Բանվորական կուռակցությանը» միանալու հարցի շուրջը ծաղած տարածայնություններն են: «Բանվորական» սոցիալիստական վեճերացիան» — ինչպես և «Ասցիալիստական բանվորական կուռակցությունը», — պառակմանտինտին ընարություններին և պառակմանտինտին մասնակցելու, «Բանվորական կուռակցությանը» միանալու դեմ ևն արտահայտվում, այս կողմից տարածայնութեալով նրանական սոցիալիստական կուռակցության բոլոր անդամների կամ նրանց մեծամասնության հետ, վորը, նրանց աշխատմ, «կոմունիստական կուռակցությունների աջ թենչ և Անդիմայում (Սիլվիա Պանկիներստի հիշյալ հոգվածը, էջ 5):

Այսորութ, հիմնականում նույն բաժանումն և ստացվում, ինչ և Գերմանիայում, չայած տարածայնությունների արտահայտման ձեր (Գերմանիայում այս մեջ շատ ավելի մոտիկ և զուռականինք, քան Անդիմայում) և մի շարք այլ պարագաների հոկայական տարրերություններին: Ազա նայենք «Ճախերի» վաստարկումներին:

Պառակմանտին մասնակցելու հարցի մասին ընկ. Սիլվիա Պանկիներստը վկայակոչում և նույն համարում դեռեղամած ընկ. Վալլակերի (W. Gallacher) հոգվածը, վորը դրում և

* Թված և, այս կուռակցությունը գեմ և բանվորական կուռակցությունը միանալուն, բայց կուռակցությունն ամբողջովին զեմ չե պառակման մասնակցելուն:

ԵԱՅՆ ԽԱՐԴԱՐՊՅԱ, — զբամ և նու, — վարչակի անոհուալատենարիստա-
կան ե, և զրա Շնուռամ կանգնած և ուզաքական զանազան հաղմանինը բառա-
թյանների ձախ թեց: Մենց Ներկայացնում ենց Շառլանցիայի հեղ-պիտո-
կան շարժումը, վարը ձարում և արտօգրությաններում (արտօգրության
արքեր Եյուղերում) Եղափակական կազմակերպության և առջարական կո-
միսների վրա հիմնած և կամունինական հուսակցության առկան ամրագ-
յերինում Մերկոր ժամանակ մենց կազմու երինց պաշտոնական պատշաճնե-
արքների և այս Մենց անհրաժեշտ շեյխներ համարում նրանց բացանայու կորի
հայտարարել, իսկ նրանց յուրիզան են իրեն մեղ վրա զրուելուց:

«Բայց իրերի արտօնություն դրությանը չեն կարող մերկար շարժունակվել: Մենց
հաղթաւ ենց ամրոց զետք:

«Անկախ բանիքական կուռակցության ժամանական անզամները Շառ-
լանցիայաւում պատճեն եւ ազիցի յնն զզդանք զբու պատշաճների անառն միտ շերիլիս
և անդական համարյա որուր խմբների Ասկանների (զարդարված և ուստական բառն
անզիքական առաջարձությամբ) կամ բանվորական Խորեւընների կողմէն եւս
հասկանուի յէ, այդ շափականց լուրջ նշանակության ունի այն պարանների
համար, վարունք քաղաքականության վրա վարդես վաստակի միջնորդ (վարդա-
պրակիստոյի) վրա յին նայում, և նրանց ամենատառակ միջնորդներ պար էն
գնում, վարդապետի իրենց անզամներին պատշաճնեատրիպանի զիւրկ վերապահաւ
համազնեն Հեղափակական ընկերները լուսն և (Ընդգծումն ամեն անդ Հնկեն-
նին ե) պաշտոնանեն այդ բանագիտներ Մեր պայցարն այսակեղ շատ զմբարին
կիմնի Դրա վարագույն զիւրկ միկը կիմնի նրանց զավանաւաթյունը,
վարունք համար անձնական շաներն ազիցի ուժեղ զաղքէն են, քան նրանց շան-
գրգռությանը հեղափակության վերաբերման: Պատշաճնեատրիպանի ամեն մի
պաշտոնաւթյանը ուղղակի պահության և այն բանին, վոր իշխանությանը ըն-
կեր մեր ըրբունական Շայքամանների ու Խափինների մեռքը Հենքերանը, Եղայ ու
(Ըլուս) և Ընկ անւուալի կերպով սեւեցին են Պատշաճական Անկախ բան-
գրական կուռակցությանն ազիցի ու ազինի յէ ընկենու բուրժուական լիրե-
րանների իշխանության առի, վարունք հոգեր ապահուն են զան պարանոյց
Ստիգմանը, Ստուգննի և Ծնկ բանակամ: Պատշաճական Անկախ բանվորական
կուռակցությանը խոր թշնամական և III Խուերեացինալին, իսկ մասսան
վերշնին և հողմանին ինչ թշնամական եւ ազում և լինի պառակենաւար-
ուուտանիստներին ազակնելը թերոնիցաւ պարոնների լուսացքն շուր լինի և
նշանակուն Բժիշտական սացիալիստական կուռակցության այսուզ զիշ մի
նշանակության շաներ... Այսուզ պիտօք և առաջ հեղութիւնական արտազական
(ինքուստրիալ) կազմակեց պարթյան և կոմմանիստական կուռակցության, վարը
զորքի պար, հաւարու, դիմական կիմնեցների համարան: Յնթե մեր ընկեր-
ները կարող են ոզնել մեղ և այն, և այս սահմանելու զործում, մանք սիրով
կընդունենց նրանց սպառթյանը: Մեթե չեն կարաղ-թող, ի սեր սամեռ,

բարութիվ շետանցուն, յեթե նըստեց չեն ուղում զագանանել հեղափոխությանը ուղարկցին հրդիքին աջակցությանը սույց տալու միջնորդ, այն ուղակցիներներներին, վարժոն ու ոյնքան յետանգով ձգում են համեմ պառզամենական շաղագովոր լու հեղինակին հարցական նշաններ կոչման, և վարժոն զագում են առաջուաներու ցանկաւթյամբ, թե իր նըստ կտրող են նույնացնելու հաջողակ կառավարել, ինչպես և բան տաելուց, զասաւարային բազագոգնունըց:

Այս նամակը խմբագրությամբ, իմ կարծեցով, հայտակապ կերպով արտահայտում և արտամազրություններն ու անուակեցով յերիստաստրոդ կոմունիստների կամ մասսովիկ ըանվորների, վորոնց նորուոր են սկսել զար ոչեղին կոմունիզմը: Այս արամազրությունը ծայրագույն աստիճանն ընթարապի և զնահատանիլ յետքուք և զնահատանը և պաշտպանել կարողանալ, վորոնց հետեւ ուսանց դրան ողբունտարիստի հեղափոխության հաղթանակին Անդրիսյում, — այլև ամեն մի ուրիշ յերկրություննել, — անհռուտավի կիրականությունը կարդիանց, վորոնց կարողանում են արտահայտել մասսաների այսպիսի տրամազրությունը, կարողանում են մասսաների մեջ (չետ հաճախ նիրհած, չզիտակցված, չարթնացած միհանեկի մեջ զտնվող) այսպիսի տրամազրությունն առաջ բերել, — սկսեց և պահպանել և խնամքով նրանց ամենատեսակ ողնությունն ցույց տալ: Բայց միննույն ժամանակին ել սկսաց և ուղղակի, բացներաց ասել նրանց, թե մննալ արամազրությունը բարձական չեմ մասսաներին հեղափոխական մեծ պարզաբուժ զնիկավարելու համար, և թե այս-ինչ ու այն-ինչ սխալները, վոր պատրաստ են անել կամ անում են հեղափոխության դործին ամենանվիրված մարդիկ, այնպիսի սխալներ են, վոր կարող են հեղափոխության դործին վնաս բերել: Ընկ Գալլակերի նամակը խմբագրությանն անտարակուսներուն ցույց և տալիս այն բոլոր սխալների սաղմերը, վոր անում են զերմանական «Ճախ» կոմունիստները և վոր անելիս են յեղել ուսւ «Ճախ» բոլշևիկները 1908 և 1918 թվականներին:

Նամակի հեղինակը լցված և ամենապնիվ պրոլետարական (վոր, սակայն, վո՞չ միայն ողբունտարներին և հասկանալի ու մոտիկ, այլև բոլոր աշխատավորներին, բոլոր «փոքր մարդկանց», յեթե զործածելու լինենք զերմանական արտահայտությունը) առելությամբ զեղի բուրժուական զատակարգային քաղաքա-

գետները։ Ճնշված ու շահազործվաղ մասսաների ներկայացուց-
չի այս ատելաւթյունը ճշմարտապնս չսկիզբն և ամենայն դերի-
մասսությանը, ամեն մի սոցիալիստական և կոմունիստական
շարժման և նրա հաջողությունների հիմքն և։ Բայց հեղինակն,
ինչպես յերեսում և, հաշվի չի առնում այն, թե քաղաքականու-
թյունը մի այնպիսի զիսություն ու արվեստ և, վոր յերկնչը ց
վայր չի ընկնաւմ, ձրիաբար չի արվում, և թե պրոլետարիատը,
յնթե նու ուղում և հաղթել բուրժուազիային, պետք և իր համար
մշակի իր, պրոլետարական, զատակարգային քաղաքականությունը,
և այնպիսի քաղաքականությունը, վորոնք բուրժուատկան քաղաքականու-
թյուն չի իման։

Նամակի հեղինակը հիմնալի հասկացել և, վոր վո՞չ թէ
պառլամենտը, այլ միայն բանվորական Աորհուրդները կարող են
պրոլետարիատի նպատակներին հասնելու դնենք լինել, և, իհար-
կե, նրանք, ովքեր մինչև այժմ այս չեն հասկացել, չարազույն
ուեակցիոններներ Են, լինի դա ամենազիտուն մարդը, ամենա-
փորձված քաղաքականը, ամենաանկեղծ սոցիալիստը, ամենա-
կարգացած մարդսիստը, ամենաազնիվ քաղաքացին ու ընտանիքա-
վորը։ Բայց նամակի հեղինակը նույնիսկ հարց չի դնում, չի
մտածում այն հարցը զնելու անհամեշտական մտաբն, թէ կո-
րելի՞ յև արդյոք իրազործել Աորհուրդների հաղթանակը պառ-
լամենտի վրա, առանց պառլամենտի ներսը գիտուրդայինք քո-
զացանեաներ մացնելու, առանց պառլամենտարիումը ներդուստ
կամքալուստնելու, առանց պառլամենտի ներսից Աորհուրդների հա-
ջողությունը նախապատրաստելու պառլամենտը ցըելու նրանց
առաջիկա խնդրում։ Մինչդեռ նամակի հեղինակը միանզամայն
ճիշտ միաց և արտահայտում, թէ կոմունիստական կուսակցու-
թյունն Անդլիայում պետք և զործի զիստական հիմունքներով։
Դիտությունը, նախ, պահանջում և ուրիշ յերկերների վորմի
հաշվառում, առանձնապնդեն, յեթե ուրիշ, նույնարկ կապկուալիս-
տական, յերկերները չափազանց նման փոքր են ապրում կամ ապ-
րել են յերշներ։ յերկորդ, պահանջում և ավյալ յերկը ներ-
սում զործող բոլոր ուժերը, իմբերը, կուսակցությունները,
զատակարգերը, մասսաները հաշվի առնել, քաղաքականությունը
ընալ չլուրունը միայն ցանկությունների ու հայացքների, միայն

մի խմբի կամ կուռակցության դիտակցականության և պայքարի պատրաստականության տատինանի հիման վրա :

